«ՉԻ ԻՆՁ ԿԵԱՆՔ ՔՐԻՍՏՈՍ Է ԵՒ ՄԵՌԱՆԵԼՆ ՇԱՀ»

ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՋԱՏԿԻ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ

(29 մարտ 1997 թ.)

«Հաւատովք ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա և զհաղորդութիւն չարչարանաց նորա՝ կերպարանակից լինել մահու նորա»:

Պօղոս Առաքեալի գրած տասնչորս թուղթերէն և ոչ մէկուն մէջ ան կը խօսի այնքան ուժգնօրէն, այնքան շեշտուած բառերով, այնքան անձնական փորձառութենէ բխած անմիջականութեամբ, որքան Փիլիպպեցւոց գրած իր նամակին մէջ: Ան կը սկսի խօսելով բանտարկեալի իր վիճակի մասին և կը գրէ բանտէն, յորդորելու իր հետևորդները որ ամուր մնան իրենց հաւատքին վրայ ի Քրիստոս Յիսուս: Իմ օրինակիս հետևեցէք, կ'ըսէ ան, որովհետև ինծի համար կեանք Քրիստոս է և մեռանիլը շահ է:

Ա. 21 Զի ինձ կեանք Քրիստոս է, եւ մեռանելն շահ:

Կեանք, որուն տօնն է այսօր, յարութեան կեանք, յաւիտենական կեանք, հոգիի կեանք: Այդ իսկ է Քրիստոսի յարութեան տօնին պատգամը բոլոր քրիստոնեաներուն, որոնք ի հաղորդութեան են Քրիստոսի չարչարանքներուն և մահուան, որպէսզի հաղորդակից ըլլան իր յարութեան և փառաւորեալ կեանքին:

Առաքեալը ցոյց կուտայ իր հաւատացեալներուն ճանապարհը որ կը տանի յարութեան կեանքին: Ան կը գրէ. ես ամէն բան վնաս կը համարեմ, մէկ կողմ կը թողում մարդկային իմ բոլոր երազները և կեանքի իմ մարմնական հասկացողութիւնը, որպէսզի աւելի լաւ ճանչնամ Քրիստոսը:

Այլ եւ համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն առաւել գիտութեան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

Առաւել գիտութիւնը Յիսուսի կարելի է հաւատքով միայն, կը սկսի հաւատքով, կը զարգանայ հաւատքով և կը հասնի իր լրումին, նոյնպէս հաւատքով:

Հաւատովք ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա և զհաղորդութիւն չարչարանաց նորա՝ կերպարանակից լինել մահու նորա:

Պօղոս տարբեր էր միւս առաքեալներէն, որովհետև սկիզբէն ընտրեալ մը չէր. ան չէր կանչուած հետևելու Քրիստոսի, ինչպէս երկոտասանը: Գալիլիոյ լճափի ձկնորսներէն չէր, որոնք հետևեցան Յիսուսի, աշակերտեցան անոր, լսեցին անոր խօսքը, ընկերացան անոր մինչև Յորդանան գետի եզերքը և լսեցին երկնային ձայնը որ կը յայտարարէր. "Սա է Որդի իմ սիրելի": Պետրոսի կամ Յովհաննէսի նման, ան չէր բարձրացած Թափոր լեռ, տեսնելու Քրիստոսէ ճառագայթող աստուածային լոյսը: Ան տեսած չէր կաղին առողջացումը, դիւայարին ազատութիւնը, կոյրին բժշկութիւնը Յիսուսի խօսքին զօրութեամբ: Ան ճանչցած էր Քրիստոսը իր հալածանքին ընդմէջէն միայն և ճանչցած էր Քրիստոսի աշակերտները կամ հետևորդները, իբրև թշնամիները, զոր պէտք է զգետնել և լռեցնել, որովհետև ինք՝ փարիսեցին, իր կեանքին նպատակը ըրած էր պաշտպանել հրեական իր աւանդութիւնը ամենայն խստասրտութեամբ:

Նոյն թուղթին մէջ, ան կը բնութագրէ ինքզինք և կ'ըսէ ինք իր մասին. «Յազգէ Իսրայէլի, ի ցեղէ Բենիամինի. Եբրայեցի յԵբրայեցւոց. ըստ աւրինացն փարիսեցի. Ըստ նախանձայոյզն լինելոյ՝ հալածէի զեկեղեցին. ըստ արդարութեան աւրինացն լիեալ անարատ: Այլ որ ինչ ինձ շահն էր, զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի»:

Սակայն, երբ ճանչցաւ Քրիստոսի ճշմարտութիւնը և հաւատքով զգաց անոր յարութեան զօրութիւնը, անոր մէջ ծնաւ նոր մարդը:

Հիմնական այս փոփոխութիւնը Պօղոսի անձին մէջ, իրմէ չեկաւ, իր շնորհիը չէ՛ր, այլ Աստուծոյ կամքը: Երբ ան կ երթար դէպի Դամասկոս տարածելու համար քրիստոսահալած իր առաքելութիւնը նոյն ինքն Յիսուս երևցաւ անոր և այլափոխեց զայն: Այնուհետև ան սկսաւ ինչ որ շահ կը նկատէր, զայն վնաս համարել վասն Քրիստոսի:

Այս երեկոյ, մեր պատարագը և աղօթքը նրագալոյցի պատարագ են և աղօթք: Այս երեկոյ, քառասնօրեայ պահոց, ապաշխարութեան և աղօթքի օրերէն ետք, եկած ենք հոգիի մեր նրագները լեցնելու նորոգուած հաւատքի իւղով, հաւատքով մը որ տանի մեզ աւելի լաւ ճանչնալու Քրիստոսը և անոր յարութեան զօրութիւնը, որովհետև հաւատքով միայն կրնաս ճանչնալ քու Տէրդ և Փրկիչդ: Հաւատք՝ թէ անոր խաչն է մեր փրկութիւնը և անոր յարութիւնն է մեր զօրութիւնը: Հաւատք թէ ինչպէս Պօղոս, նոյնպէս և մեզմէ իւրաքանչիւրը, որքան ալ կարծրասիրտ ըլլայ և հեռու Աստուծմէ, պիտի գայ օր մը, երբ յայտնուի անոր նոյն ինքն Քրիստոս և հաւատքի սերմեր ցանէ անոր սիրտին մէջ: Իսկ անոնք, որոնք արդէն իսկ կը հաւատան Քրիստոսի, անոնց սիրտին մէջ Քրիստոսի յարութիւնը կը ծնի յոյսը, յոյսը թէ իրենք ևս պիտի արժանանան յաւիտենական կեանքին: Այդ յոյսն է Քրիստոսի յարութեան զօրութիւնը, որու մասին կը գրէ Պօղոս Փիլիպպեցիներուն:

Նոյն նամակի վերջաւորութեան, Պօղոս առաքեալ կը գրէ հետևեալը.

Կան բազմաթիւ մարդիկ ձեր մէջ, որոնց մասին գրած եմ, բայց հիմա կ'ըսեմ լալով թէ թշնամի են Քրիստոսի խաչին և պիտի կործանին, որովհետև անոնց Աստուածը անոնց որովայնն է և անոնց փառքը՝ անոնց ամօթը: Անոնք երկրաւորը միայն կը խորհին, անոնց մտածումը և մտահոգութիւնը երկրաւոր, առժամեա բարիքներն են, որոնք պիտի կորսուին, ուշ կամ կանուխ: Առաքեալը անոնց կը հակադրէ հաւատացեալները, որոնք իրենց աչքերը կը կտրեն երկրայինէն և կը յառեն երկինք և կը սպասեն Տեառն Յիսուսի Քրիստոսի. որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ, կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց, ըստ զաւրութեան՝ առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն:

Նորոգուելու և յարուցեալին կերպարանակից դառնալու յոյսն է որ կը ճառագայթէ Քրիստոսի Ս. Գերեզմանէն: Հաւատք և յոյս մը, որոնց զօրութիւնը ի վեր է քան զմիտս և զխորհուրդս:

Կը պատմեն թէ երկու անապատական ճգնաւորներ կը քալէին անապատին մէջ, հովիտի մը եզրին, երբ անոնցմէ մէկուն ոտքը սահեցաւ և ինք սկսաւ գլորիլ դէպի վար: Ան կառչեցաւ արմատի մը և սկսաւ օգնութիւն հայցել իր ընկերէն: Ճգնաւորը նայեցաւ դէպի վար և ըսաւ իր ընկերին. "Թողուր արմատը, հաւատա թէ պիտի փրկուիս ու վեր բարձրացիր": Անկարելին կարելի ընող հաւատքի մասին է այսօր մեր խօսքը: Մահը կեանքի վերածող, երկրաւորը՝ երկնայինի, խոնարհութեան մարմինը Քրիստոսի փառաց մարմինի և մարդը՝ աստուածայինի:

Սիրելի հաւատացեալներ,

Բոլորս ալ այսօր կոչուած ենք ըլլալու Աստուծոյ որդիներ, մերկանալու երկրաւորը և վերածնելու երկնայինի յոյսին մէջ: Նայինք հաւատքի աչքերով Քրիստոսի թափուր գերեզմանին և լսենք, մեզի համար ևս ըսուած հրեշտակին աւետիսը. Չէ՛ աստ, այլ յարեաւ:

Այսօր, ոևէ ժամանակէ աւելի, մեր կեանքը պիտի առաջնորդուի յոյսով. թէ Աստուածը մեր հայրերուն, որ մեզի համար ևս իջաւ յերկիրն Այրարատեան, այցի պիտի գայ մեզի և զօրացնէ մեր հաւատքը իր յարութեան զօրութեամբ և մենք, ժողովուրդ և խաշն արօտի նորա, պիտի վերականգնենք խոնարհուած մեր տաճարները, պիտի ամրանանք մեր հայրենի հողին վրայ, պիտի պայքարինք պահելու համար մեր հոգին անարատ և հաւատաւոր և պիտի նայինք ապագային, յոյսի աչքերով:

Այդ յոյսով, անկարելին կարելի դարձնող յոյսով է որ կ'ողջունեմ բոլորդ և կ'ըսեմ և դարձեալ կը կրնեմ.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ: